ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«15» 06 2026թ.
No 1/18-4/36241-2026

«ԻՆՏԵՐ ՊՐԻՆՏ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ԱՐՄԱՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ
ՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ, ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 28
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ info@interprint.am

Հարգելի պարոն Ծատուրյան

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և «Ինտեր Պրինտ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2026 թվականի ապրիլի 27-ին կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4-1 ծածկագրով պետության կարիքների համար դրոշների ձեռբերման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն Վաճառողը պարտավորվել էր մինչև 2026 թվականի մայիսի 25-ը մատակարարել համապատասխան ապրանքատեսակը: Վաճառողը 2026 թվականի մայիսի 27-ին մատակարարել է Պայմանագրով նախատեսված դրոշներ-1 և դրոշներ-2 ապրանքատեսակները, որոնք, սակայն չեն համապատասխանել տեխնիկական բնութագրին: Վաճառողը 2026 թվականի հունիսի 9-ին Կ/28600-2026 գրությամբ դիմել է Գնորդին՝ առաջարկելով միակողմանի լուծել ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/4-1 ծածկագրով պայմանագիրը և տեղեկացնելով, որ պատրաստ է վճարել օրենսդրությամբ սահմանված բոլոր տույժ-տուգանքները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաճառողը հրաժարվում է Պայմանագրով սահմանված ապրանքների մատակարարումից՝ Գնորդը ստիպված է սույն թվականի հունիսի 12-ից Պայմանագիրը միակողմանի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Պայմանագրի 6.2 կետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով: Տույժը կազմում է 3 569 ՀՀ դրամ (509880 x 0.05% =254.94 x 14աշխատանքային օր):

Պայմանագրի 6.3 կետի համաձայն՝ Գնորդից պետք է գանձվի տուգանք՝ Պայմանագրով նախատեսված գումարի 0,5 տոկոսի չափով: Տուգանքը կազմում է 2549 ՀՀ դրամ (509880 x 0,5% = 2549):

Տուգանքը և տույժը պետք է փոխանցվի ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի 900005028106 հաշվեհամարին:

Կատարողից պետք է գանձվի նաև 76500 ՀՀ դրամ որակավորման ապահովման գումար և 51000 ՀՀ դրամ՝ պայմանագրի ապահովման գումար:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում Պատվիրատուն կնախաձեռնի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ 6/15/2026

X

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Signed by: MATEVOSYAN DAVIT 3601870398

Կատարող՝ ԳԿՎԱՎ գնումների համակարգման բաժին
Սպարտակ Հարությունյան
Հեռ.060-844-702